

Հաճախ տրվող հարցերի պարզաբանումներ

Ընդերքօգտագործողների կողմից ներկայացվող հրապարակային հաշվետվությունները պետք է լրացվեն համաձայն ՀՀ Կառավարության N 666-Ն որոշմամբ սահմանված ուղեցույցի: Ի հավելումն, ելնելով ընդերքօգտագործողների կողմից առաջ բերած հարցերից՝ մշակվել են լրացուցիչ ուղենիշային ցուցումներ Հավելված 2-ի հաշվետվությունները ճիշտ լրացնելու համար:

Ձև N1՝ Հրապարակային հաշվետվություն ներկայացնող ընդերքօգտագործող, արտադրությունը, ներքին իրացումը, արտահանումը և զբաղվածությունը

1. *Արտադրության և ներքին շուկայում իրացման* վերաբերյալ տվյալները անհրաժեշտ է լրացնել համաձայն ֆինանսական հաշվառման:
2. *«Արտադրություն (ըստ արտադրատեսակների)»* աղյուսակում անհրաժեշտ է լրացնել միայն մետաղ պարունակող արտադրանքը:
3. Ֆինանսական տվյալները անհրաժեշտ է լրացնել առանց ավելացված արժեքի հարկի:
4. *«Արտահանում (ըստ արտադրատեսակների)»* աղյուսակում անհրաժեշտ է նշել արտահանվող մետաղ պարունակող արտադրանքի մաքսային հայտարարագրում նշված երկիրը:
5. *Զբաղվածների թիվը* իրենից ներկայացնում է աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակը հաշվետու տարվա կտրվածքով (հաշվետու տարվա 12 ամիսների միջին ցուցակային թվաքանակների միջինը): Աշխատակիցների միջին ցուցակային թվաքանակն իր հերթին ներառում է քաղաքացիաիրավական պայմանագրով աշխատողներին:

Ձև N 2՝ Ընդերքօգտագործողի կողմից վճարված հարկերը, վճարները և տուրքերը

6. *«Հարկեր և վճարներ»*՝ Շահութահարկ դաշտում նշված ԿՖՎ 2001 ծածկագրի համաձայն խնդրում ենք ոչ ռեզիդենտի շահութահարկը ընդգրկել ընդհանուր շահութահարկի հաշվարկի մեջ, ինչպես նաև ոչ ռեզիդենտի շահութահարկը առանձին ցույց տալ «Նշումներ» դաշտում:
7. Հարկերի գծով առկա կանխավճարների և դրանց մարումների գծով տվյալները չեն լրացվում, բացառությամբ այլ հարկերի մարմանն ուղղված հաշվանցումների:
8. *«Հարկեր և վճարներ»*՝ Եթե ընդերքօգտագործող ընկերությունը ծավալում է գործունեությունն նաև այլ ոլորտներում, ապա հարկերի վերաբերյալ տեղեկատվությունը պետք է տրամադրվի ամբողջական՝ առանց գատելու գործունեության այլ ոլորտներին վերաբերող հարկերը: Հաջորդ ժամանակաշրջանների զեկույցներում հնարավոր է ավելացվի ըստ ծրագրերի հաշվետվություններ ներկայացնելու պահանջ:
9. *«Հարկեր և վճարներ»*՝ Հաշվետու տարվա համար հարկային հաշվարկվող (հայտարարագրով) հաշվարկված անուղղակի հարկերը ներառում են նաև ԵՏՄ-ից ներկրումների գծով հաշվարկված/վճարված հարկերը:

10. «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համայնում»՝ Եթե ՀՀ կառավարության թիվ 1079-Ն որոշման համաձայն դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափը «նախագծով և (կամ) ծրագրով և (կամ) ընդերքօգտագործման պայմանագրով» սահմանված չէ, խնդրում ենք «Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար» սյունյակում մուտքագրել 0՝ «նշումներ» հատվածում հստակ պարզաբանելով, որ խնդրի առարկա փաստաթղթերով դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափ սահմանված չէ:
11. «Մշտադիտարկումների իրականացման վճար»՝ Եթե ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի թիվ 22-Ն որոշման համաձայն հանքի փակման ծրագրով մշտադիտարկումների նախահաշվային արժեք սահմանված չէ կամ հանքի փակման ծրագիր ընդհանրապես ներկայացված չի եղել (ի թիվս այլոց մինչ 2012թ. ընդերքի օգտագործման թույլտվություն ստացած լինելու պատճառով), խնդրում ենք «Հաշվարկման բազային չափը» և «Վճարման ենթակա գումարի մեծությունը հաշվետու տարվա համար» սյունյակ մուտքագրել 0՝ «նշումներ» հատվածում հստակ պարզաբանելով, որ հանքի փակման ծրագիր առկա չէ կամ հանքի փակման ծրագրով մշտադիտարկումների նախահաշվային արժեք սահմանված չէ:
12. «Տուրքեր»՝ Տուրքերի հաշվարկված գումարը չպետք է ներառի տույժերն ու տուգանքները:

Ձև N 3՝ Ընդերքօգտագործողի կողմից վճարված տեղական հարկերը և վճարները

13. Եթե ընդերքօգտագործող ընկերությունը ունի բազմաթիվ հողատարածքներ ՀՀ տարբեր համայնքներում, ապա պետք է տրամադրել տեղեկատվությունը հողի հարկի վերաբերյալ բոլոր հողատարածքների գծով՝ ըստ համայնքների:
14. Համայնքների օգտին կատարված կանխավճարները հողի գնումները ֆինանսավորելու գծով չեն ընդգրկվում հաշվետվության մեջ:

Ձև N 5՝ Ընդերքօգտագործողի սոցիալ-տնտեսական ներդրումը համայնքին

15. Եթե ընդերքօգտագործող ընկերության կողմից համայնքում կատարվել են բարեգործական բնույթի աշխատանքներ ի օգուտ հասարակության՝ առանց համայնքի հետ որևէ պայմանագրային պարտավորությունների, ապա նմանատիպ աշխատանքները պետք է լրացնել «Ընդերքօգտագործողի կողմից համայնքին կատարված բարեգործական հատկացումներ, նվիրատվություններ կամ այլ ձևով համայնքին կատարված անհատույց օտարումներ» դաշտում:
16. Ինչպես նշված է ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի N 666 - Ն որոշման Հավելված 2-ի Ընդերքօգտագործողների Կողմից Ներկայացվող Հրապարակային Հաշվետվության Լրացման Ուղեցույցում, Ձև N 5-ը պետք է ներառի տեղեկատվություն համայնքին կատարված սոցիալ-տնտեսական ներդրումների վերաբերյալ: Իսկ ոչ առևտրային իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց տրամադրված նվիրատվությունների, նվիրաբերությունների կամ այլ ձևով կատարված անհատույց օտարումների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է լրացվի Ձև N 6-ում:

Հիշեցում

Ընդերքօգտագործողների կողմից տրամադրած նախնական տվյալները, ինչպես նաև պետական մարմինների կողմից տրամադրված տեղեկատվության հետ համադրության արդյունքում համաձայնեցված տվյալները ընդգրկվելու են Անկախ ադմինիստրատորի կողմից հրապարակվող Զեկույցի մեջ: